



### Տեխնիկական տվյալներ

Մոդել	SM 1450 Plus
Արտ.-Nr.	1715 93 908
Սնուցում ցանցից	230 Վ / 1-50 Հց
Կլանվող հզորություն	2,3 կՎ
Ապահովիչ	16 Ա
Մատուցվող ջրի մաքս. ջերմաստիճան	50°C
Մատուցվող ջրի մին. ջերմաստիճան	5°C
Մատուցվող ջրի մին. հոսք	600 լ/ժ
Մատուցվող ջրի մաքս. ճնշում	8 բար
Ջրի հոսք	480 լ/ժ
Առավելագույն ճնշում	145 բար
Ատրճանակի հետհարվածի ուժ	16 Ն
Ձայնային ճնշման մակարդակ	81 dB (A)
Վիբրացիայի տարածումը օգտ. թեւերին	2,24 m/s <sup>2</sup>
Չափս	38 x 32 x 89 սմ
Քաշ	19 կգ
Մաքրող նյութի տարայի տարողություն	0,3 լ

### Ուշադրություն

Սարքի հետ օգտագործել բացառապես մաքուր ջուր: Եթե այնուամենայնիվ սարք է մատակարարվել կեղտոտ ջուր, ապա անպայման մի քանի րոպե սարքի մեջ ապահովել մաքուր ջրի հոսք: Սարքի հետ օգտագործել միայն արտադրողի կողմից երաշխավորվող, 90% կենսաբանորեն տրոհվող մաքրող նյութեր: Այլ նյութերի օգտագործումը կարող է վնասել սարքի անվտանգ աշխատանքը: Ոչ մի դեպքում չօգտագործել լուծիչներ, բենզին, նոսրացուցիչ, ացետոն պարունակող մաքրող նյութեր:

### Ցուցում

Բարձր ճնշման լվացող սարքը բանեցնելուց առաջ անպայման ուշադիր կարդալ Շահագործման ուղեցույցը:

# ԲԱՐՁՐ ՃՆՇՄԱՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԼՎԱՑՈՂ ՍԱՐՔ

Կիսապրոֆեսիոնալ  
Սառը ջրով օգտագործելու համար

Նախատեսված է մեքենաների, սարքերի, շինությունների, սարքավորումների սառը ջրով լվացման, ինչպես նաև լվացող նյութերը էֆեկտիվ բաշխմամբ օգտագործելու համար:

### Առավելություններ

- ▶ Ունի ջերմապաշտպան անջատիչ:
- Էլեկտրական շարժիչի գերտաքացման դեպքում սարքի աշխատանքն ավտոմատ կերպով ընդհատվում է:
- ▶ Total-Stop անվտանգության մեխանիզմ
- Հատուկ անվտանգության մեխանիզմի շնորհիվ փոշեցիր ատրճանակի լծակը բաց թողնելիս անվտանգության փականն արգելակում է այն եւ այդպիսով կանխում սարքի՝ պատահական/անցանկալի գործարկումը:
- ▶ Easy-Start մեխանիզմ
- Սարքի շահագործման առաջին րոպեներին ճնշումը նվազեցնելու միջոցով հեշտացնում է սարքի գործարկումը:
- ▶ 1 տարվա երաշխիք
- Բոլոր տեսակի արտադրական թերությունները այս ժամանակահատվածում կնորոգվեն անվճար:

### Առաքման լրակազմ

Բարձր ճնշման ճկափող 8մ, պտտվող ծայրոցով ատրճանակ, փրփրաարտադրիչ հարմարանք, շահագործման ուղեցույց, երաշխիքային կտրոն:

### Հարակից պարագաներ

Ցանկության դեպքում բարձր ճնշման լվացող սարքը հնարավոր է համալրել հետևյալ պարագաներով.

- **ավազաշիթային կոմպլեկտը** հղկում է մակերեսները՝ հեռացնելով ժանգը, լաքապատումները, նստվածքները եւ այլն;
- **խողովակ մաքրող գոնդը** նախատեսված է խողովակները խցանումներից մաքրելու համար;
- **պտտվող լվացող խոզանակը** նախատեսված է զգայուն մակերեսները մաքրելու համար;
- **անշարժ լվացող խոզանակը** նախատեսված է զգայուն մակերեսները մաքրելու համար:

Այս տվյալները խորհուրդներ են, որոնք հիմնված են մեր փորձի վրա: Այնուամենայնիվ խորհուրդ ենք տալիս անպայման նախապես փորձարկել: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս Շահագործման ուղեցույցը: